

ՏԱՐԵՎԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների
կենտրոնի 2007թ. գործունեության վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2008

Ներածություն

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2007թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքները:

Սույն հաշվետվությունը ներկայացվում է ի կատարումն ՖԴԿ կանոնադրության 4.1 կետի 3-րդ պարբերության և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006թ. դեկտեմբերի 1-ի թիվ 695Ա որոշման և հաշվի առնելով ՖԱԹՖ-ի 26-րդ ստանդարտի պահանջները:

Հաշվետվությունն անդրադառնում է հետևյալ հարցերին.

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և ենթաօրենսդրության ներդրմանն ուղղված աշխատանքներ 2
2. ՖԴԿ ներքին գործընթացների կանոնակարգում 4
3. ՖԴԿ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և բաշխման ուղղությամբ կատարված աշխատանքներ 5
4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կիրառման նկատմամբ վերահսկողությանն օժանդակմանը ուղղված աշխատանքներ..... 6
5. ՖԴԿ տեղեկատվական շտեմարանի զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքներ 7
6. ՖԴԿ միջազգային կապերի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքներ... 8
7. Ուսուցման, խորհրդատվության և հանրային իրազեկության ուղղությամբ իրականացված աշխատանքներ10
8. «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման ընթացքը..... 11

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և ենթաօրենսդրության ներդրմանն ուղղված աշխատանքներ

2007թ. ընթացքում ՖԴԿ կողմից մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը և համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր: Նշված օրենսդրական փաթեթը շրջանառվել է շահագրգիռ

գերատեսչությունների և ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումների շրջանակում, ստացված դիտողություններն ու առաջարկություններն ամփոփվել են և հաշվի առնվել նախագծերում: Այնուհետև, օրենսդրական փաթեթը հանգամանորեն քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում: Օրենսդրական փաթեթն ուղարկվել է նաև միջազգային փորձաքննության. Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները օրենսդրական փաթեթի վերաբերյալ ներկայացրել են եզրակացություն, համաձայն որի՝ օրենքի նախագիծը հիմնականում արտացոլում է ՖԱԹՖ-ի 40+9 ստանդարտները: Համաձայնեցված օրենսդրական փաթեթը 2007թ. սեպտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այն քննարկվել է ՀՀ կառավարության 2007թ. հոկտեմբերի 4-ի նիստում, որի արդյունքում օրենքների նախագծերի լրամշակված տարբերակները սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով: Ակնկալվում է, որ Ազգային ժողովում օրենսդրական փաթեթը կքննարկվի և կընդունվի 2008թ. առաջին կիսամյակում:

2007թ. ընթացքում ՖԴԿ կողմից աշխատանքներ են իրականացվել նաև ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերը կանոնակարգող միասնական գերատեսչական նորմատիվ ակտի մշակման ուղղությամբ: Այդ կապակցությամբ 2007թ. առաջին կեսին մշակվել և Կենտրոնական բանկի խորհրդի հաստատման է ներկայացվել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության գործառույթի իրականացման վերաբերյալ» կանոնակարգը: Սակայն, որոշվել է կանոնակարգի հաստատումն ու գրանցումը հետաձգել և այն ներկայացնել հաստատման ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նոր օրենքի ընդունումից հետո, որով կապահովվի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ամբողջական ներդրումը և ներդաշնակությունը:

2007թ. ակտիվ աշխատանքներ են տարվել նաև պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների մասին հաշվետվական ձևերի վերանայման ուղղությամբ: Այսպես, 2007թ. փետրվար ամսին հաստատվել են բոլոր հաշվետվական ձևերի վերանայված տարբերակները (թիվ 001-006 ձևեր), ինչպես նաև ընդունվել է նոր՝ թիվ 007 հաշվետվական ձևը՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ: 2007թ. նոյեմբերին նույնպես թիվ 001-007 հաշվետվական ձևերը ենթարկվել են փոփոխությունների ու լրացումների՝ պայմանավորված էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաշվետվությունների տրամադրումը հնարավոր դարձնելու, ինչպես նաև սխալ կամ թերացում պարունակող հաշվետվությունների շտկման և ներկայացման ընթացակարգերը


հստակեցնելու անհրաժեշտությամբ: Նշված վերանայումները հետևանք են եղել ՖԴԿ կողմից հաշվետվություն տրամադրող անձանց հետ երկարատև քննարկումների, որի արդյունքում որոշակիացվել են հաշվետվությունների ամբողջականության, պարզության, ինչպես նաև վերլուծությունների ընթացքում դրանց օգտակարության բարձրացման նպատակով անհրաժեշտ՝ հաշվետվական ձևերի, դրանց տրամադրման կարգի ու ժամկետների համապատասխան պահանջները:

2. ՖԴԿ ներքին գործընթացների կանոնակարգում

2007թ. ընթացքում ՖԴԿ կողմից իրականացվող աշխատանքների ծավալի ընդլայնման, ինչպես նաև օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին բնորոշ կառուցվածք ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ քայլեր են ձեռնարկվել ՖԴԿ կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորման ուղղությամբ: Այդ նպատակով Կենտրոնական բանկի նախագահի 2007թ. մարտի 12-ի թիվ 3/74 ու 2007թ. մարտի 21-ի թիվ 3/116 կարգադրություններով հաստատվել է ՖԴԿ նոր կառուցվածքը: Արդյունքում՝

- ավելացվել է ՖԴԿ ղեկավարի տեղակալի հաստիք.
- ՖԴԿ կազմում ստեղծվել են երեք բաժիններ:

Նշված փոփոխությունների արդյունքում ձևավորված ՖԴԿ նոր կառուցվածքն ունի հետևյալ պատկերը՝



ՖԴԿ նոր կառուցվածքի հիման վրա մշակվել է ՖԴԿ ներքին ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկը: Ձեռնարկում նկարագրվում են տեղեկատվություն ստանալու,

վերլուծելու և առաքելու, տեղեկատվություն պահպանելու, վիճակագրություն վարելու, ինչպես նաև այլ գործառույթների հետ կապված ՖԴԿ կառուցվածքային ստորաբաժանումների և ղեկավարության միջև հնարավորինս համապարփակ ուղղահայաց ու հորիզոնական բիզնես-գործընթացները:

3. ՖԴԿ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և բաշխման ուղղությամբ կատարված աշխատանքներ

ՖԴԿ-ի կողմից իրականացվող վերլուծությունների համար աղբյուր են ծառայում հաշվետվություն տրամադրող անձանցից ստացված հաշվետվությունները, տեղական իրավապահ մարմիններից, արտասահմանյան ՖՀՄ-ներից, ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումներից ստացված հարցումներն ու հաղորդագրությունները, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ վեր հանված տեղեկատվությունը: 2007թ. ընթացքում ՖԴԿ-ն ստացել է կասկածելի գործարքի մասին թվով 27¹ հաշվետվություն հաշվետվություն տրամադրող անձանցից, 13 հաղորդագրություն և/ կամ հարցում տեղական իրավապահ մարմիններից, 19 հարցում արտասահմանյան ՖՀՄ-ներից, 7 հարցում և/կամ հաղորդագրություն ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև թվով 6 դեպքում վերլուծության է ենթարկվել սեփական նախաձեռնությամբ վեր հանված տեղեկատվությունը:

2007թ. ՖԴԿ կողմից ստացված տեղեկատվության/ ազդակների վերլուծության ուղղությամբ կատարված աշխատանքներն ամփոփ ներկայացված են հավելված 1-ում:

ՖԴԿ կողմից իրականացվող տակտիկական և օպերացիոնալ վերլուծական գործընթացները կանոնակարգելու և վերլուծության արդյունքներով իրականացվելիք գործողությունները հստակեցնելու նպատակով ՖԴԿ կողմից մշակվել և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից 2007թ. դեկտեմբերի 4-ին հաստատվել է «ՖԴԿ կողմից կասկածելի գործարքների վերաբերյալ գործերի վերլուծության ընթացքում և արդյունքներով իրականացվող գործողությունների վերաբերյալ» ձեռնարկը:

Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ կասկածելի գործարքների վերլուծական կարողությունները բարձրացնելու, ինչպես նաև ՖԴԿ վերլուծությունների արդյունքները միջազգային պրակտիկայում տեղ գտած ՓԼ/ԱՖ սխեմաների հետ համադրելու նպատակով ՖԴԿ-ն նախաձեռնել է տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված ՓԼ/ԱՖ տիպաբանությունների հայերեն թարգմանության, ինչպես նաև

¹ ՖԴԿ տվյալների շտեմարանում առկա է թվով 27 կասկածելի գործարքի մասին հաշվետվություն, որից երեքը լրացումներ են արդեն ստացված հաշվետվություններից

սեփական ռազմավարական վերլուծության արդյունքներով ՖԴԿ տիպաբանությունների կազմման գործընթաց: Մշակված տիպաբանությունները 2008թ. նախատեսվում է տրամադրել հաշվետվություն տրամադրող անձանց, ինչպես նաև լայնորեն կիրառել ՖԴԿ վերլուծությունների ընթացքում:

Օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ տեղեկատվության փոխանակման ընթացքը

ՖԴԿ կողմից էզմոնտ խմբին անդամակցելուց հետո (տե՛ս 6-րդ մասը) էականորեն ակտիվացել է ֆինանսական հետախուզության այլ մարմինների հետ տեղեկատվության փոխանակման գործընթացը. մեծացել է հարցումների քանակը, կրճատվել են պատասխանի համար պահանջվող ժամկետները: 2007թ. ընթացքում արտասահմանյան ֆինանսական հետախուզության մարմիններին կատարվել է 20 հարցում, որոնց կապակցությամբ ստացվել է 18 պատասխան: Բացի այդ, ստացվել է 19 հարցում, որոնց բոլորին սահմանված ժամկետներում ներկայացվել են պատասխաններ:

Միջազգային գործընկերների հետ տեղեկատվության փոխանակումն ընդգրկել է նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրավական կարգավորման առանձին հարցերի վերաբերյալ փորձի փոխանակմանը միտված հարցումներ:

4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կիրառման նկատմամբ վերահսկողությանն օժանդակմանը ուղղված աշխատանքներ

2007թ. ընթացքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային ստանդարտների և ՀՀ օրենսդրության հիման վրա առանձնացվել են հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերին ներկայացվող պահանջները: Այդ պահանջներին համապատասխան կատարվել է բանկերի և վարկային կազմակերպությունների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող ներքին իրավական ակտերի դիտանցում: Դիտանցման արդյունքում կազմվել է վերոնշյալ ակտերի գնահատման աղյուսակ, որում արտացոլված արդյունքները գրությունների տեսքով, Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության միջոցով ներկայացվել են նշված ֆինանսական հաստատություններին: Գրությունները պարունակել են ներքին իրավական ակտերում արտացոլման ենթակա պարտադիր պահանջներ և լրացուցիչ առաջարկություններ, որոնք հիմնված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտների և օրենսդրական կարգավորման վրա: Վերոնշյալ գրությունների հիման

վրա ֆինանսական հաստատությունների զգալի մասը համապատասխան փոփոխություններ է կատարել իր ներքին կանոնակարգող ակտերում և դրանք ներկայացրել է ՖԴԿ-ին:

ՖԴԿ և Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից համատեղ մշակվել և 2007թ. հուլիսին հաստատվել է նշված երկու ստորաբաժանումների միջև համագործակցության ձեռնարկը:

Ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների թերի կամ սխալ լրացման կապակցությամբ 2007թ. ընթացքում ՖԴԿ կողմից կազմվել են 33 ամփոփագրեր, որոնք փոխանցվել են Ֆինանսական վերահսկողության վարչությանը, որի կողմից իրականացվել են համապատասխան գործողություններ, այդ թվում՝ հարուցվել են վարույթներ և կիրառվել են պատժամիջոցներ:

ՖԴԿ կողմից պարբերաբար կազմվում և տեղեկանքներ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ իրենց վերահսկողության տակ գտնվող հաշվետվություն տրամադրող անձանց կողմից թերի կամ սխալ լրացված հաշվետվությունների վերաբերյալ:

5. ՖԴԿ տեղեկատվական շտեմարանի զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՖԴԿ տեղեկատվական շտեմարան մուտքագրվող տեղեկատվությունը 2006թ. համեմատ ավելացել է շուրջ 41%-ով: 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՖԴԿ տվյալների շտեմարանում առկա հաշվետվությունների քանակը կազմել է մոտ 130 հազար:

2007 թվականի ընթացքում ՖԴԿ տվյալների շտեմարանում՝ որպես հաշվետվություն տրամադրող անձ հաշվառվել են ֆինանսական հաստատություններ, ինչպես նաև ոչ ֆինանսական հաստատություններ կամ անձինք, որոնց վերաբերյալ ամբողջական տեղեկությունները արտացոլված են հավելված 2-ում:

Վերլուծական գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու և համակարգելու նպատակով ՖԴԿ ներքին հանձնարարականների հիման վրա կատարվել են նաև հետևյալ աշխատանքները՝

1) Հստակեցվել են տեղեկատվական շտեմարանից տարբեր հաշվետվությունների, տեղեկանքների և քաղվածքների տրամադրման ձևերը, այդ փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու ընթացակարգը:

2) Կանոնակարգվել են ՖԴԿ կողմից մոնիտորինգի դրված անձանց ցանկերի և «Սև ցուցակների»² վարման մեխանիզմները, մշակվել են դրանցում ներառված տվյալների և ՖԴԿ տեղեկատվական շտեմարան մուտքագրված տեղեկատվության համեմատման ալգորիթմները:

3) Արտաքին տվյալների բազաներին հասանելիության նպատակով իրականացվել է «World-Check»-ի և Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրի տեղեկատվական շտեմարանների համակցումը ՖԴԿ տեղեկատվական շտեմարանին:

Բացի այդ, ՖԴԿ-ն միացել է նաև ՀՀ միջկառավարական կորպորատիվ ցանցին: Դրա արդյունքում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները սկսել են ներկայացվել էլեկտրոնային պաշտպանված եղանակով:

6. ՖԴԿ միջազգային կապերի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն շարունակել է միջազգային գործընկերների հետ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները:

Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնաժողովի գործունեության շրջանակներում ՖԴԿ ղեկավարի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է ՄԱՆԻՎԱԼ-ի 23-րդ, 24-րդ և 25-րդ լիագումար նիստերին: Նշված նիստերին ՀՀ պատվիրակությունը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի առաջընթացի վերաբերյալ տեղեկություններ, տարբեր հարցերի քննարկումների ժամանակ ներկայացրել իր դիրքորոշումը: ՄԱՆԻՎԱԼ-ի աշխատանքներում Հայաստանի Հանրապետության համար առավել կարևորվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատմանը նախապատրաստման հարցը: Այդ առումով ՀՀ պատվիրակության նախաձեռնությամբ ՄԱՆԻՎԱԼ-ը քննարկել և հավանություն է տվել նշված 3-րդ փուլի գնահատումը 2008թ. հոկտեմբեր ամսից 2009թ. առաջին կիսամյակ տեղափոխելու հարցին, ինչն անհրաժեշտ էր ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նոր օրենքի ընդունմամբ և գործարկմամբ գնահատման ցուցանիշները բարձրացնելու ակնկալիքով: ՀՀ

² Ներառում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հրապարակված «Համախմբված ցանկում» ներառված անձանց ու կազմակերպություններին:

պատվիրակության առաջարկությամբ որոշվել է նաև գնահատումն իրականացնել Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների հետ համատեղ:

Էզմոնտ խմբի գործունեության շրջանակներում, դեռևս 2006թ. նախաձեռնված ՖԴԿ անդամակցության գործընթացը հաշվետու ժամանակահատվածում հաջողությամբ եզրափակվել է. 2007թ. հունիսին Էզմոնտ խմբի 15-րդ լիազումար նիստում ՖԴԿ-ն դարձել է այդ կառույցի լիիրավ անդամ: Անդամությունից հետո ՖԴԿ-ն համակցվել է Էզմոնտի՝ սահմանափակ մուտքի հնարավորությամբ ինտերնետային կայքին և անվտանգ տեղեկատվական ցանցին, որը հնարավորություն է տվել էապես ակտիվացնել տեղեկատվության փոխանակումն օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ (առավել մանրամասն տե՛ս 3-րդ մասում): ՖԴԿ-ն նաև մասնակցել է Էզմոնտ խմբի կոմիտեի և աշխատանքային խմբերի՝ 2007թ. հոկտեմբերին կայացած նիստերին:

Հանցավոր եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման Եվրասիական խմբի հետ համագործակցության շրջանակներում, հաշվի առնելով այդ կառույցում Հայաստանի Հանրապետության դիտորդի կարգավիճակը, ՖԴԿ աշխատակիցները մասնակցել են Եվրասիական խմբի 6-րդ և 7-րդ լիազումար նիստերին, ինչպես նաև աշխատանքային խմբերի հանդիպումներին: ՖԴԿ-ն նաև կազմակերպել է խմբի քարտուղարությունից ստացված տարբեր աշխատանքային փաստաթղթերի և հարցաշարերի լրացման, համաձայնեցման ու տրամադրման աշխատանքները:

ՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ՖԴԿ-ն մասնակցել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Հակաահաբեկչական կոմիտեի պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում կազմակերպված քննարկումներին: Հանդիպումների ընթացքում պատվիրակության անդամներին մանրամասն ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գործող մեխանիզմները, իսկ այցի ավարտին՝ քննարկվել ու համաձայնեցվել է պատվիրակության կողմից ներկայացված նախնական հաշվետվությունը:

ԱՄՆ տեխնիկական օժանդակության շրջանակներում հաստատվել է ՖԴԿ-ին տրամադրվող ֆինանսական օժանդակության ծրագիրը: 2007թ. նոյեմբերին կատարված ԱՄՆ փորձագետների այցի ընթացքում որոշվել են այդ տեխնիկական օժանդակության շրջանակներում իրականացվելիք ծրագրերի հետևյալ ուղղությունները՝ ա. օտարերկրյա ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգերի ուսումնասիրությանը միտված գործնական այցելություններ, բ. ՖԴԿ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված օժանդակություն, գ. ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտի կանոնակարգերի զարգացման

ոլորտին աջակցություն: Նշված ուղղություններից յուրաքանչյուրի համար մշակվել են աշխատանքային ծրագրեր, որոնց իրականացմանը նախատեսվում է ձեռնամուխ լինել 2008թ.-ից:

7. Ուսուցման, խորհրդատվության և հանրային իրազեկության ուղղությամբ իրականացված աշխատանքներ

2007թ. ընթացքում ՖԴԿ կողմից համաձայնեցվել ու նախաձեռնվել են տարբեր ուսումնական ծրագրեր, որոնք հասցեագրվել են ինչպես ֆինանսական հաստատություններին, այնպես էլ վերահսկող և իրավապահ մարմիններին: Այսպես՝

1. 2007թ. մարտ ամսին ՖԴԿ կողմից իրականացվել է Կենտրոնական բանկի, Ոստիկանության և Դատախազության իրավասու աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսման կարիքների գնահատում: Նշված գնահատման արդյունքները հաշվի են առնվել ուսուցման և խորհրդատվության հետագա ծրագրերի կազմակերպման ընթացքում:

2. 2007թ. հունիս ամսին ՖԴԿ գործուն աջակցությամբ ԱՄՆ Ֆեդերալ ռեզերվային համակարգի հետ համատեղ Երևանում անց է կացվել «Փողերի լվացման դեմ պայքար» թեմայով տարածաշրջանային սեմինար:

3. Հաշվետու ժամանակահատվածում (սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներ) ՖԴԿ-ն հարցում է կատարել ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերին՝ խնդրելով ներկայացնել ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերը: Ներկայացված հարցադրումներն ամփոփվել են, որոնց հիման վրա ՖԴԿ-ն հանդիպումների շարք է կազմակերպել տարբեր բանկերում: Այդ հանդիպումների ընթացքում պարզաբանվել են բարձրացված հարցերը, ինչպես նաև ներկայացվել են ՖԴԿ գործունեության սկզբունքներն ու ապագա ծրագրերը, բանկերի նկատմամբ առաջադրվող պահանջները: Բարձրացված բոլոր հարցադրումները համատեղ քննարկելու նպատակով 2007թ. նոյեմբեր ամսին կազմակերպվել է ամփոփիչ սեմինար:

4. 2007թ. դեկտեմբեր ամսին ՖԴԿ-ի խնդրանքով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը ՀՀ բանկերի ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող աշխատակիցների համար կազմակերպել է սեմինար՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ: Սեմինարի արդյունքներով մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ աշխատակիցները գնահատված ուսուցման բացերի հիման վրա մասնակցել են ՓԼ/ԱՖ կանխարգելմանը վերաբերող տարբեր ուսումնական ծրագրերի՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտերկրում:

ՖԴԿ աշխատանքներում արձանագրված նորությունները, ինչպես նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգի բոլոր նշանակալից փոփոխությունները տեղակայվել են ՖԴԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում (www.cba.am/fmc/index.htm):

8. «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման ընթացքը

2007թ. ընթացքում ՖԴԿ նախաձեռնությամբ գումարվել է Միջգերատեսչական հանձնաժողովի 4 նիստ, որոնց ընթացքում, ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, քննարկվել ու համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը վերաբերող՝ առավել կարևոր հետևյալ հարցերը.

1. Միջգերատեսչական հանձնաժողովը դիմել է ՀՀ Նախագահին՝ իր կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով: Այդ նպատակով 2007թ. փետրվարի 22-ին ՀՀ Նախագահին ընդունել է թիվ ՆԿ-38-Ա հրամանագիրը, որով վերահաստատել է հանձնաժողովի հետևյալ կազմը՝

- 1) ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ).
- 2) ՀՀ Նախագահի օգնական,
- 3) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,
- 4) ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
- 5) ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ,
- 6) ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ,
- 7) ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,
- 8) ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահի տեղակալ,

9) ՀՀ հարկային պետական ծառայության պետի տեղակալ,

10) ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության պետ,

11) ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի ղեկավար,

12) Հայաստանի բանկերի միության նախագահ:

2. Հանձնաժողովի նիստերում ներկայացվել են ՀՀ պատվիրակությունների (հիմնականում ՖԴԿ աշխատակիցների մասնակցությամբ) հաշվետվությունները՝ ՄԱՆԻՎԱԼ-ի, Եվրասիական խմբի, Էզմոնտ խմբի լիազումար և աշխատանքային խմբերի նիստերին մասնակցության վերաբերյալ:

3. Միջգերատեսչական հանձնաժողովում բազմիցս քննարկվել է կանխիկ արժույթի և վճարային փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության ներմուծման/արտահանման դեպքում հայտարարագրման պահանջ սահմանելու հարցը: Հանձնաժողովի որոշման հիման վրա ՖԴԿ-ն նախապատրաստել և համաձայնեցրել է հայտարարագրման ռեժիմը նկարագրող որոշումը, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է 2007թ. նոյեմբերի 16-ին:

4. Միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է ՖԴԿ կողմից ներկայացված հետազոտությունը ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող «սև ցուցակների» և դրանց վարման կարգի վերաբերյալ: Այդ կապակցությամբ հանձնաժողովը որոշել է հանձնարարել ՖԴԿ-ին հաշվետվություն տրամադրող ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց, ինտերնետային կայքում հղում կատարելու միջոցով, հասանելի դարձնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հրապարակված «Համախմբված ցանկ»-ի թարմացված տարբերակները՝ դրանցում ներգրավված անձանց ֆինանսական միջոցների անհապաղ սառեցման պահանջով:

5. Միջգերատեսչական հանձնաժողովում քննարկվել է նաև օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների և ՖԴԿ միջև փոխըմբռնման համաձայնագրերի կնքման հարցը: Հանձնաժողովը ընդունել է որոշում համաձայնագրերի համար որպես հիմք ընդունել Էզմոնտի մոդելային համաձայնագրի տարբերակը:

6. Հանձնաժողովում առանձին քննարկման առարկա է դարձել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ ՖԱԹՖ-ի ստանդարտներին համապատասխանության կարգավիճակը: Այդ կապակցությամբ ՖԴԿ-ն հետազոտական հաղորդում է ներկայացրել նշված համապատասխանության կարգավիճակի ինքնագնահատման արդյունքների վերաբերյալ: Հանձնաժողովը որոշել է հաշվի առնել

ինքնագնահատման արդյունքները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նոր օրենսդրության լրամշակման ժամանակ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՖԴԿ կողմից ստացված տեղեկատվության/ ազդակների վերլուծության վերաբերյալ

Ստացված տեղեկատվությունը/ ազդակները (ՖՀՄ-երից, իրավապահ մարմիններից, ԿԲ ստորաբաժանումներից)	ԿԳՀ-երը	Կասկածելի գործարքների վերաբերյալ բացված գործերը	Այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ վերհանված տեղեկատվության հիման վրա բացված գործերը	Իրավապահ մարմիններին ուղարկված հաղորդումները	Հարուցված քրեական գործերը	Դատական քննության ներկայացված գործերը	Կայացված դատավճիռները
39	27 ³	29	6	11	1	0	0

* Բացված գործերի թիվը (29) տեղեկատվության ստացման դեպքերի ընդհանուր թվից (66) փոքր լինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք դեպքերում ստացված մի քանի ԿԳՀ միավորվում են մեկ գործի շրջանակներում, կամ՝ ստացված որոշ հարցումների նախնական վերլուծության արդյունքում հարցում ուղարկված կողմին տրվում է պատասխան, սակայն գործ չի սկսվում:

³ Որոնցից երեքը (3) ուղարկվել է որպես կասկածելի գործարքի մասին հաշվետվության լրացում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻՆՔ	2007թ. ընթացքում հաշվառվել են	Ընդամենը հաշվառված են	2007 թ-ի ընթացքում հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՖԴԿ-ին ներկայացված հաշվետվություններ	
			ընդամենը	որից կասկածելի
			հատ	հատ
Բանկեր	0	22	74051	27 ⁴
Վարկային կազմակերպություններ	7	20	400	0
Դրամական փոխանցումների իրականացնող կազմակերպություններ	3	4	0	0
Արտարժույթի դիլերային առուվաճառք	1	4	271	0
Արժեթղթերի շուկայի մասնագիտացած անձիք՝ Բրոքերային ընկերություններ	3	15	912	0
Արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ	0	5		0
Արտարժույթի առուվաճառքի մասնագիտացված գործունեություն իրականացնող անձիք	61	198	0	0
Գրավատուն	9	52	2	0
Ապահովագրական ընկերություններ	1	14	74	0
Նոտար	10	69	1205	0
Խաղատներ և շահումով խաղ կազմակերպող անձիք	24	52	0	0
Վիճակախաղ կազմակերպող անձիք	0	3	1	0
Նվիրաբերություն իրականացնող անձիք	0	2	4	0

⁴ Նշված թվից երեքը ուղարկվել է որպես կասկածելի գործարքի մասին հաշվետվության լրացում:

Կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ	44	44	556	0
--	----	----	-----	---